ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԱՖՅՈՒՌՈՒՂՂՈՒՄ

(1966 թ. հուլիս–դեկտեմբեր)

ԲՈՒԼՂԱՐԻԱ

Պլովդիվի հայկական թատերական կոլեկտիվը Սլիվենի հայ մշակույթի տանը հաջողությամբ ներկայացրել է Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ»-ը։

«Երևան», 24 հունիսի

• • •

Բուլղարիայում այժմ ապրում են շուրջ 25000 հայեր։

Բուլղարիայի ամենից ավելի հայաշատ գաղութը Պլովդիվն է։ 1945—46 թթ. 4500 հայեր մեկնել են Սովետական Հայաստան։ Գաղութը ունի զանազան ինքնագործ խմբեր, մեկ շաբաթաթերթ՝ «Երեան», 5000 տպաքանակով, «Երևան» մշակութային միությունը Սոֆիայում, գրադարաններ, ակումբներ և այլն։

«Էրարերթ», 6 օգոստոսի

• • •

Սոֆիայի հայկական «Երևան» ակումբում նոյեմբերի 4-ին տոնվել է Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 49-րդ տարեդարձը։

«Երևան», 11 նոյեմբերի

• • •

Նոյեմբերի 29-ի 46-րդ տարեդարձը մեծ շուքով տոնվել է Ռուսեում, Վառնայում, Սլիվենում, Յամպոլում, Այթոսում, Բուրգասում, Բազարջիքում, Սումենում, Սիլիստրայում և այլ քաղաքներում։

«Երևան», 16 դեկտեմբերի

• • •

Վառնայի «Երևան» շքանշանակիր թատերախումբը Սոֆիայում ներկայացրել է Շիրվանզադեի «Քառս»-ը։

«Երևան», 23 դեկտեմբերի

• • •

Յամպոլի ընթերցարանի Կարմիր սրահում դեկտեմբերի 24-ին կազմակերպվել է Միամանթոյի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված դասախոսություն։ Դասախոս՝ Ա. Պերպերյան։

«Երևան», 20 հունվարի 1967

ՉԵԽՈՍԼՈՎԱԿԻԱ

Հուլիսի 16-ին Պրագայում մահացել է անվանի հայագետ, պրոֆ. Նշան Մարտիրոսյանը։ Նա երկար տարիներ վարել է Պրագայի Համալսարանի արևելյան լեզուների ամբիոնը։

«Արև», 29 հուլիսի

• • •

Չեխական «Պրագա-Մոսկվա» ժուռնալի 1966 թ. երրորդ համարը նվիրված է Հայաստանին։ Համարը բացվում է Հայաստանի մասին Լյուդմիլա Մոտալովայի ընդարձակ հոդվածով։ Բերված են Պլուտարքոսի, Անատոլ Ֆրանսի, Բայրոնի, Բրյուսովի ասույթները Հայաստանի մասին, Վ. Դրոսմանի գրքից փոքր հատված։

Բյուրականի աստղադիտարանի մասին հոդվածի հեղինակն է Յոզեֆ Կլայրը։ Արվեստագետ Հ. Իդիթյանը ծանոթացնում է Հայաստանի նկարիչների հետ։ Մի առանձին բաժին վերնագրված է «Հայ գրականության փոքրիկ անթոլոգիա», որտեղ տեղ են գտել Խորենացին ու Նարեկացին, Սայաթ-Նովան, Թումանյանն ու Տերյանը, Չարենցը, Բակունցն ու Շիրազը։

«Էրարերթ», 9 օգոստոսի

ԼԵՀԱՍՏԱՆ

Լյուբլինում լույս է տեսել լեհ հայագետ Միրոսլավա Զակշևսկա-Դուբասովայի «Հայերը Զամոստիայում և նրանց գերը Լեհաստանի և Արևելքի միջև առևտրական ու մշակութային կա-

«պում» գիրքը։ Աշխատությունը բաղկացած է նեռածականից, տասը ընդարձակ գլուխներից և հավելվածից։

«Պայքար», 9 հունիսի

ՍԻՐԻԱ

Դամասկոսի Ազգային թարգմանչաց ճեմարանը կազմակերպել է դասախոսություն՝ նվիրված նոյեմբերի 29-ի պատմական անցքին։

Ճեմարանի տեսչությունը «որոշած է մասնավոր ծրագրով ու հայտագրով վառ պահել մշակութային կյանքը դասախոսություններու շարքով մը»։ Դասախոսությունները պետք է լինեն պատմական, մշակութային, տնտեսական և քաղաքական հարցերի շուրջը։

«Արարատ», 16 դեկտեմբերի

ԱՄԱՆ

Ալեքսանդրիայի «Տիգրան Երկաթ» հայ ուսանողական մարմինը հուլիսի 16-ին հանդիսավորությամբ տոնել է իր հիմնադրման հիսնամյակը։ Այս կապակցությամբ շնորհավորական հեռագրեր են ստացվել Հայաստանից, Կանադայից, Ավստրալիայից, Կահիրեի, Ալեքսանդրիայի մշակութային միություններից և այլն։

«Ջահակիր», 28 հուլիսի

• • •

Կահիրեի Հայ գեղարվեստական միության «Թեքեյան» սրահում կազմակերպվել է երեկույթ՝ նվիրված զորավար Անդրանիկի ծննդյան տարեդարձին։ Բանախոսել է Նուպար Քյուփելյանը։

«Լրաբեր», 3 դեկտեմբերի

• • •

Կահիրեի հայկական ընթերցասրահի վարչությունը նոյեմբերի 29-ին կազմակերպել է Սովետական Հայաստանի ազատագրման 46-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր երեկո, որին մասնակցել են պետական պաշտոնյաներ, մամուլի ու մտավորականության ներկայացուցիչներ և մեծաքանակ բազմություն։

«Արարատ», 9 դեկտեմբերի

• • •

Կահիրեում տեղի է ունեցել հայ մեծանուն կոմպոզիտոր Ալ. Սպենդիարյանին նվիրված երեկո։ Հանդեսին մասնակցել են նաև տեղի «Թաթուլ Ալթունյան» երգչախմբի մենակատարները։

«Երևան», 9 դեկտեմբերի

• • •

Կահիրեի Թորգոմյան մատենադարանը հիմնվել է 1864 թ. և ունի 150 հազար գիրք։ Թորգոմյան մատենադարանի ամենահին գիրքը 1640 թ. հրատարակված գիրքն է։ Այնտեղ կան XIII, XIV և XV դարերի բազմաթիվ արժեքավոր ձեռագրեր։ Մատենադարանը ունի հայկական օրաթերթերի, շաբաթաթերթերի և պարբերականների հարուստ հավաքածուներ՝ սկսած 1860 թ.։

Մատենադարանը կապեր է հաստատել Հայաստանի և արտասահմանի հայկական գրեթե բոլոր գրադարանների հետ։

«Հառաջ», 18 դեկտեմբերի

• • •

Եգիպտոսում բացվել է նկարչական ցուցահանդես, որին մասնակցում էին արաբական յոթ երկրների 56 ներկայացուցիչներ։ Յուրաքանչյուր երկրից ընտրվել է առաջնության արժանի մեկ կտավ։ Եգիպտոսից առաջնություն է նվաճել քսանամյա Նորայր Ասլանյանի «Նեղոսյան համանվագ» աշխատանքը։ Ասլանյանը Հայ գեղարվեստասիրաց միության երիտասարդական շարժման ղեկավարներից է։

«Հայրենիքի ձայն», 12 փետրվարի, 1967 թ.

ԼԻԲԱՆԱՆ

Լիբանանի Ջահլե քաղաքում կառուցվում է հայ մշակութային տունը, որտեղ հատուկ բաժին է հատկացվելու հայ երիտասարդաց ընկերությանը։

«Սևան», 10 օգոստոսի

• • •

Նոյեմբերի 27-ին Բեյրութ է ժամանել Հայաստանի Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնի խումբը։ Թատերախումբը բացի ներկայացումներից կազմակերպել է ասմունքի երեկոներ, հանդես է եկել հեռուստացույցով, հանդիպումներ է ունեցել աշակերտության հետ, ծանոթացել է երկրի տեսարժան վայրերին։

«Զարթոնք», 9 դեկտեմբերի

• • •

Բեյրութի Գ. Կյուլպենկյան սրահում դեկտեմբերի 5-ին տեղի է ունեցել ասմունքի երեկո Սունդուկյանի անվան թատրոնի դերակատարներ Վ. Փափազյանի, Ա. Ավետիսյանի, Գ. Հարությունյանի, Մ. Սիմոնյանի, Թ. Դիլաբյանի, Վ. Վարդերեսյանի, Բ. Ներսիսյանի, Ժ. Էլոյանի

և Վ. Աբաջյանի մասնակցությամբ։ Երեկոն անցել է մեծ հաջողությամբ։

«Զարթոնք», 6 դեկտեմբերի

• • •

Բեյրութի հեռուստատեսությունը մեկ ժամ նվիրել է հայ մշակույթին։ Հաղորդվել են Սայաթ-Նովայի բանաստեղծությունները, հայկական պարեր ու երգեր, հեռուստադիտողներին ծանոթացրել են եգիպտահայ տաղանդավոր նկարիչ Աշոտ Զորյանի հետ։

«Երևան», 9 դեկտեմբերի

• • •

Բեյրութի ազգային երաժշտանոցի սրահում բացվել է «ժողովրդային կրթությունը Սովետական Հայաստանում» ցուցահանդեսը։

Ցուցահանդեսի բացմանը ներկա են եղել կրթական նախարարության ընդհ. տնօրեն պր. Ֆ. Սավայան, Լիբանանում Սովետական Միության դեսպան Պ. Դեդուշկինը, լիբանանահայ կրթական, հանրային գործիչներ, թղթակիցներ և այլք։

«Զարթոնք», 27 նոյեմբերի

ԻՐԱՔ

Իրաքի Հայկական բարեգործական ընդհանուր միության նորաստեղծ հայկական երգի-պարի խումբը «Խուլդ» ամառային սրահում ունեցել է իր անդրանիկ ելույթը։

Հանդեսին մասնակցել են Իրաքի նախարարներ, պետական պաշտոնյաներ, դիվանագիտական ներկայացուցիչներ։ Խմբի ելույթը անցել է մեծ հաջողությամբ։

«Հայրենիքի ձայն», 13 նոյեմբերի

• • •

Բաղդադում Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը կազմակերպել է մշակույթի տասնօրյակ, որին մասնակցել են Պորտուգալիայի «Գալուստ Կյուլպենկյան» սիմֆոնիկ նվագախումբն ու երգչախումբը և լիբանանահայ երգի-պարի անսամբլը։

Մշակույթի տասնօրյակի փակման հանդեսին մասնակցել է նաև Իրաքի հանրապետության նախագահ Արեֆը։

«Նոր օր», 20 դեկտեմբերի

• • •

Բաղդադում տեղի է ունեցել գրական-գեղարվեստական երեկո՝ նվիրված Պետրոս Դուրյանին և Մատթեոս Զարիֆյանին։

«Արարատ», 29 դեկտեմբերի

ԿԻՊՐՈՍ

Նիկոզիայում ՍՍՀՄ դեսպանատանը ցուցադրվել են Սովետական Հայաստանի ֆիլմերը՝ տեղի հայկական համայնքի համար։ Ներածական խոսքով Կիպրոսի հայկական համայնքի ներկայացուցիչներին է դիմել Կիպրոսում ՍՍՀՄ արտակարգ ու լիազոր դեսպան Պ. Կ. Ծրմոշինը։ Հայկական ՍՍՀ հնգամյա նոր պլանի մասին զեկուցել է դեսպանության աշխատակից Աբգարյանը։

«Լրաբեր», 16 հուլիսի

ԻՐԱՆ

Երեքհարյուրամյա պարսկահայ գաղութը, ըստ թերթի, ունի 120000 բնակչություն, որից 85 հազարը գտնվում է Թեհրանում. այստեղ կան 26 նախնական և միջնակարգ դպրոցներ՝ քսան հազար աշակերտներով և մեկ եկեղեցի։

«Ջահակիր», 22 սեպտեմբերի

ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հնդկաստանի Կալկաթա քաղաքում 1921 թ. գործում էր երկու հայկական դպրոց՝ տղաների մարդասիրական ճեմարանը և Դավթյան օրիորդաց վարժարանը։ 1948 թ. այս երկու հաստատությունները միացել են և դարձել մեկ վարժարան, ուր սովորում են 160 աշակերտ։ Գաղութում կազմակերպվում են հանդեսներ, տոնախմբություններ, նշվում են տարելիցներ։ Այստեղ վերանորոգվել է «Ագդարար»-ի հրատարակիչ Շմավոնյանի թանգարանը։

«Հայրենիքի ձայն», 12 փետրվարի

ԹՈՒՐՔԻԱ

Թուրքիայում լույս է տեսել Բարսեղ Թուղլուճյանի թուրքերեն-անգլերեն բառարանը, որը պարունակում է շուրջ 100000 բառ (1000 էջ)։

Թուղլուճյանը հեղինակն է «Անգլերեն-թուրքերեն ոճերի և ասույթների» բառարանի, անգլերեն-լատիներեն և թուրքերեն բժշկական բառարանի, անգլերեն-ֆրանսերեն և թուրքերեն իրավագիտական և տնտեսական բառարանի, որը պարունակում է 80000 բառ։

«Արև», 11 հոկտեմբերի

• • •

Պոլսի Գում-Գաբու թաղամասում բացվել է Պողոսյան-Վարվառյան վարժարանը։

«Արարատ», 6 դեկտեմբերի

• • •

Ստամբուլի Եսայան սանուց միությունը կազմակերպել է համերգ, որտեղ հանդես է եկել օր. Գոհարիկ Տիրատուրյանը՝ կատարելով Կոմիտասի, Սպենդիարյանի, Տիգրանյանի, Ալեմշահի, Ղազարոսյանի և ուրիշների ստեղծագործությունները։

«Արարատ», 29 դեկտեմբերի

• • •

Պոլսի Եսայան սանուց միությունը մի քանի ամիս է, ինչ ձեռնարկել է «Կամսար» ամսաթերթի հրատարակությունը։

«Հայրենիքի ձայն», 5 փետրվարի 1967 թ.

ԱՎՍՏՐԻԱ

Վիեննայի Մխիթարյան միաբանության արքահայրն է Մեսրոպ Հապոզյանը։ Միաբանության տպարանը հրատարակություններ է տպում 20 լեզուներով։ Վիեննայում այժմ ապրում են մոտ 300 հայեր։ Այլ երկրներից եկած 70 հայ ուսանողներ սովորում են Վիեննայի համալսարանում։

«Լրարեր», 17 դեկտեմբերի

ՖՐԱՆՍԻԱ

Փարիզում տեղի է ունեցել ֆրանսիացիների և հայերի բարեկամությանը նվիրված երեկո։ Երեկույթին նախագահել է Ֆ. Ֆեյդին, դասախոսել է Ժ. Քազալպուն։ Դասախոսը, հիշելով հայ ժողովրդի պատմական տխուր անցյալը, հատկապես մեծ եղեռնը, կանգ է առել Սովետական Հայաստանի աննախընթաց վերելքի վրա։

«Աշխարհ», 4 հունիսի

• • •

Ալֆորվիլի մունիցիպալ խորհուրդը կազմակերպել է հայկական մշակույթի տոն։ Այս կապակցությամբ Հայաստանից հրավիրվել են մի խումբ դերասաններ։ Ալֆորվիլի քաղաքագլուխ Ֆրանսեսկին հայտարարել է, որ ֆրանսիական ժողովուրդը երջանկություն ու բարգավաճում է մաղթում Հայկական ՍՍՀ ժողովրդին և բոլոր հայերին։ Նա հաղորդել է, որ Ալֆորվիլի մունիցիպալ խորհրդի որոշմամբ քաղաքի նոր մայրուղիներից մեկը կոչվելու է Երևանյան։

«Աշխարհ», 8 հոկտեմբերի

• • •

Նոյեմբերի 27-ին Փարիզի Փլեյելի սրահում տոնվել է Սովետական Հայաստանի 46-րդ տարեդարձը։ Տոնակատարությանը ներկա էին Սովետական Միության դեսպան Վ. Զորինը դեսպանատան աշխատակիցների հետ, քաղաքապետներ, հրեսփոխաններ, զանազան կազմակերպությունների ներկայացուցիչներ, կրոնական ընկերությունների, ֆրանսիական մշակութային միության ու ԺԱՖ-ի կենտրոնական վարչության նախագահներ ու անդամներ, ինչպես նաև մամուլի ներկայացուցիչներ։

Հայաստանի մասին բանախոսել են Հ. Շիրինյանը և Տետեյանը։ Ողջույնի խոսք է ասել Վ. Զորինը։ Սովետական Միության և Սովետական Հայաստանի հանրապետության նախագահների ուղերձները հրապարակել է Արման Լանուն։

Վերջում տրվել է շքեղ համերգ։

«Աշխարհ», 3 դեկտեմբերի

• • •

Ալֆորվիլում գործում է հինգշաբթօրյա հայկական դպրոց, որտեղ սովորում են մոտ 90 աշակերտ։ Ինը երիտասարդներից կազմված հանձնախումբը նպատակ ունի հայ մանուկներին սովորեցնել հայերեն լեզու ու գրականություն, կազմակերպել տարեկան հանդեսներ և մարզական մրցություններ։

«Հայրենիքի ձայն», 18 դեկտեմբերի

ՄՈՆԱԿՈ

Մոնակոյում բացված գծանկարների ցուցահանդեսում «Եվրոպայի մրցանակ»-ը շահել է փարիզահայ նկարիչ Ռիշար Ժերանյանը իր «Անտառը» և «Երիտասարդուհին» գործերի համար։

«Արև», 10 օգոստոսի

ԻՏԱԼԻԱ

«Հայաստանի պատմությունը Ռոթարիի մեջ» խորագրով հոդվածում իտալական «Լա պրովինսիա» օրաթերթը հայտնում է, որ լիբանանահայ դոկտոր Տիգրան Ալեքսանյանը կարդացել է դասախոսություն հայ ժողովրդի անցյալի և ներկայի մասին, հատկապես հիշեցնելով հիսուն տարի առաջ տեղի ունեցած աննախընթաց ցեղասպանությունը։ Իտալացի ունկնդիրները մեծ հետաքրքրությամբ են լսել այս դասախոսությունը։

Աշխարհ», 8 հոկտեմբերի

• • •

Վենետիկում Մեսրոպ Ջանալյանի թարգմանությամբ իտալերեն հրատարակվել է Սայաթ-Նովայի ընտիր երգերի ժողովածուն։ Իտա-

լացի հայտնի գրաքննադատ Ֆեդերիկո Բենագին հետևյալն է գրել Սայաթ-Նովայի ու նրա այս ժողովածուի մասին. «Մեծահամբավ այդ բանաստեղծի սիրային քնարերգությունը նույնանում է հայկական ժողովրդական երգերի հետ՝ հասնելով արվեստի գերագույն աստիճանին։ Կարդալով այդ երգերը, մարդ մոռանում է ներբանս չափը, հանգերը և կառուցվածքը, որովհետև բանաստեղծի գորովը և պատկերները այնպիսի ուժ ունեն, որ ընթերցողին ձգում-տանում են մի այլ աշխարհ՝ հավերժ ջերմ ու դյութական սիրո աշխարհ։ ...Մենք՝ իտալացիներս, որ մինչև վերջերս բնավ չէինք լսել սիրո այդ անմահ երգչի անունը, այժմ մեր ձեռքի տակ ունենք նրա սքանչելի երգերը, որոնք դառնում են նաև մեր սեփականությունը»։

«Գրական թերթ», Երևան, 21 հոկտեմբերի

* * *

Իտալական «Պաեզե Սերա» թերթը տպագրել է Աննարելա Ռոսսիի ընդարձակ հոդվածը իտալացի չորս ճարտարապետների Սովետական Հայաստան կատարած այցելության մասին։

«Զարթոնք», 24 նոյեմբերի

* * *

Երիտասարդ պատմաբան-հնագետ, իտալուհի Աննա Լոկարնին մեծ հետաքրքրությամբ զբաղվում է հայոց պատմության և հնագիտության հարցերով։ Նա այժմ հետաքրքրվում է Սևանի ավազանի պեղումներով։ Նրա խնդրանքով Հայաստանից իրեն ուղարկվել են անհրաժեշտ նյութեր։

«Նոր օր», 20 դեկտեմբերի

ԱՆԳԼԻԱ

Լոնդոնի Հայ տան մեջ հունիսի 10-ին ճարտարապետ Կարպիս Արմենը դասախոսություն է կարդացել հայկական ճարտարապետության մասին։

«Արև», 15 սեպտեմբերի

ԱՎՍՏՐԱԼԻԱ

Սիդնեյում և Մելբուռնում Զարուհի Դոլուխանյանը մի շարք համերգներ է տվել, որոնք անցել են մեծ հաջողությամբ։ Տեղական թերթերը գովասանքով են խոսել անվանի երգչուհու կատարողական արվեստի մասին։

«Արարատ», 5 հոկտեմբերի

* * *

Ավստրալահայ գաղութում մինչև այժմ լույս էր տեսնում «Լույս» անունով ամսագիրը (Սիդնեյում)։ Այս տարվա հուլիսից Մելբուռնում սկսեց լույս տեսնել երկրորդ պարբերականը՝ «Հույս» անունով, Ոսկան Գալփաքյանի խմբագրությամբ։ Թերթի մեծ մասը հայերեն է, փոքր մասը անգլերեն։

«Աշխարհ», 10 դեկտեմբերի

ՃԱՊՈՆԻԱ

«Ճապոնական նոր գրականություն» ամսագրի վերջին համարում զետեղված են Հակոբ Հակոբյանի, Հովհաննես Հովհաննիսյանի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Եղիշե Չարենցի, Նաիրի Զարյանի, Գևորգ Էմինի և Սիլվա Կապուտիկյանի բանաստեղծությունները։ Թարգմանիչ Մինորուա Տացուձին իր նեբրածականում գրել է. «...Մենք տեղեկացանք, որ հայ ընթերցող հասարակությունը բավական լավ պատկերացում ունի ճապոնական դրականության մասին, ինչ, ցավոք սրտի, չի կարելի ասել նաև մեր մասին հայ գրականության նկատմամբ»։

«Գրական թերթ», Երևան, 21 հոկտեմբերի

ԿԱՆԱԴԱ

Մոնրեալի համալսարանի հայ ուսանողները կազմել են «Հայ ուսանողական միություն»։ Միության գլխավոր նպատակն է այլազգի ուսանողներին ծանոթացնել հայ ժողովրդի, նրա մշակույթի ու պատմական անցյալի հետ։

«Լրաբեր», 9 օգոստոսի

* * *

Մոնրեալի Թեքեյան Մշակութային միության թատերական հանձնախումբը նոյեմբերի 20-ին ներկայացրել է Հակոբ Պարոնյանի «Պաղտասար աղբար»-ը։ Ներկայացումն անցել է հաջողությամբ։

«Պայքար», 6 դեկտեմբերի

ԱՐԳԵՆՏԻՆԱ

Բուենոս-Այրեսում վերջին երեք տարիների ընթացքում իսպաներեն թարգմանվել և լույս են տեսել մի շարք գրքեր՝ նվիրված հայ ժողովրդի պատմությանը։ Այսպես, օրինակ, 1965 թ. հրատարակվել է փարիզահայ մտավորական Հրանդ Թորոսյանի «Հայ դատը», Նայիմ բեյի և Արամ Անտոնյանի «Պաշտոնական թղթակցություններ 1915-ի հայկական ջարդերու մա-

սին», Աշոտ Արծրունու «Հայաստան և Հայոց պատմությունը» գրքերը։

«Արև», 10 օգոստոսի

• • •

Բուենոս-Այրեսում օգոստոսի 12-ին Արսլանյան ազգ. վարժարանում Հայ համալսարանականների միության նախաձեռնությամբ տեղի է ունեցել «Հայոց պատմության» դասընթացի առաջին դասախոսությունը։ Դասախոսությունը կարդացել է Ռուբեն Արծրունին, իսպաներեն, ներկայացնելով հայ ժողովրդի ծագումը և զարգացումը մինչև V դարը։

«Ջահակիր», 8 սեպտեմբերի

• • •

Բուենոս-Այրեսում հոկտեմբերի 1-ին բացվել է հայկական առաջին գրավաճառատունը «Հայ համալսարանականներու միության նախաձեռնությամբ»։ Գրատան մեջ ցուցադրվել են հայկական թերթեր ու գրքեր։

«Սևան», 12 հոկտեմբերի

• • •

Բուենոս-Այրեսում Արսլանյան ազգային վարժարանի սրահում տեղի է ունեցել արվեստագիտուհի Անթառամ Ահարոնյանի դասախոսությունը (իսպաներեն) հայկական արդի երաժշտության մասին։

«Շարժում», 19 նոյեմբերի

• • •

Բուենոս-Այրեսի Օդեոն մեծ թատրոնում տեղի է ունեցել հայկական պարարվեստի ու երգի երեկո։ Ելույթ են ունեցել «Գայանե» պարի անսամբլը և «Երևան» նվագախումբը։

«Հայրենիքի ձայն», 25 դեկտեմբերի

ԲՐԱԶԻԼԻԱ

Սան-Պաուլոյի պետական թատրոնում հոկտեմբերի 22-ին տեղի է ունեցել Գոհար Գասպարյանի համերգը, որն անցել է մեծ հաջողությամբ։

«Զարթոնք», 26 նոյեմբերի

ՉԻԼԻ

Սանտ-Յագոյում այժմ ապրում են 500 հայեր, որոնցից երկու երրորդը Պաղեստինից գաղթած արարախոս հայեր են։ Գաղութը ունի Հայ տուն, Կիրակնօրյա վարժարան, որը հիմնվել է 1960 թ. Գաղութի մեծ մասը բալուցիներ են։

«Ջահակիր», 22 սեպտեմբերի

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Գոհար Գասպարյանը համերգաշարքով հանդես է եկել Հարավային Ամերիկայում։ Բրազիլիայի, Ուրուգվայի և Արգենտինայի խոշորագույն քաղաքներում ունեցած ելույթների մասին ծավալուն քննադատականներ են զետեղել գրեթե բոլոր հեղինակավոր թերթերը։

«Լրարեր», 3 հունվարի

ԱՄՆ

Լոս-Անջելոսում հոկտեմբերի 14-ին տեղի է ունեցել դոկտ. Արա Ավագյանի դասախոսությունը (անգլերեն) «Աշխարհագրություն Հին Հայաստանի» նյութի շուրջը։ Դասախոսությունը կազմակերպել է Լոս-Անջելոսի Հայ երիտասարդաց մշակութային միությունը։

«Նոր օր», 31 հոկտեմբերի

• • •

Նյու-Յորքում հոկտեմբերի 16-ին Հայ գրականության բարեկամների միությունը տոնեց իր հիմնադրման տասնամյակը։

«Լրարեր», 12 նոյեմբերի

• • •

Նյու-Յորքի Կառնեգի Հոլում տեղի է ունեցել երգչուհի Գ. Պերպերյանի համերգը։ Նա միջազգային համբավ է վայելում որպես ժամանակակից երգերի կատարող։ Նյու-Յորքի ամերիկյան հայտնի թերթերի երաժշտական քննադատները գովեստով են արտահայտվել Պերպերյանի կատարողական արվեստի մասին։

«Պայքար», 2 նոյեմբերի

• • •

Նոյեմբերի 27-ին Լոս-Անջելոսում հանկարծամահ է եղել ականավոր գյուղագիր Համաստեղը (Համբարձում Կելենյանը)։ Նրա ստեղծագործություններից նշանավորներն են «Գյուղը», «Սպիտակ ձիավորը», «Աղոթարան»-ը, «Այծետոմար»-ը, «Քաջ Նազար»-ը և այլն։

«Լրարեր», 3 դեկտեմբերի

• • •

Ամերիկահայ ականավոր կոմպոզիտոր Ալան Հովհաննեսի «Պիղատոս» նոր օպերան մեծ հաջողությամբ ներկայացվել է Լոս-Անջելոսում։

«Երևան», 9 դեկտեմբերի

* * *

Սովետական Հայաստանի 46-րդ տարեդարձը մեծ հանդիսավորությամբ տոնվել է Նյու-Յորքում, Ֆրեզնոյում, Լոս-Անջելոսում, Դետրոյտում, Ֆիլադելֆիայում, Բոստոնում։

«Լրարեր», 20, 24 դեկտեմբերի

* * *

Նյու-Յորքում լույս տեսնող «Լրարեր»-ը գրում է, թե 1966 թ. դեկտեմբերի 1-ի տվյալներով հայերի թիվն աշխարհում հետևյալ պատկերն ունի.

1.	Հայկական ՍՍՀ	2030000
2.	Ադրբեջանական ՍՍՀ	560000
3.	Վրացական ՍՍՀ	550000
4.	ՌՍՖՍՀ	330000
5.	Ա Մ Ն	450000
6.	Ավստրալիա	15000
7.	Ավստրիա	300
8.	Արգենտինա	70000
9.	Բրազիլիա	27000
10.	Բուլղարիա	25000
11.	Եգիպտոս	22000
12.	Եթովպիա	1000
13.	Թուրքիա	250000
14.	Իտալիա	1500
15.	Իրան	200000
16.	Իրաք	30000
17.	Լիբանան	180000
18.	Կիպրոս	3500
19.	Հնդկաստան	800
20.	Հորդանան	10000
21.	Հունաստան	11000
22.	Չիլի	4000
23.	Ռումինիա	8000
24.	Սիրիա	150000
25.	Սուդան	1000
26.	Ուրուգվայ	15000
27.	Քուվեյթ	7000
28.	Ֆրանսիա	200000
29.	Մնացած երկրներում և ՍՍՀՄ մյուս հանրապետություններում՝	347900
	Ընդամենը	5500000

«Լրարեր», 28 հունվարի 1967 թ.

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ։